

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՄԱՆԹԱՇԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«28» օգոստոսի 2013 թ.

գ. Փոքր Մանթաշ

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Մանթաշի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 85 կարգադրության, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳԱՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ Ռուբեն Հարությունյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Մարիամ Գյողակյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արտավազ Գևորգյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳԱՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Զորիկ Խաչատրյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հիդրոգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) առաջին կարգի մասնագետ Էմիլ Պետրոսյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի գյուղական համայնքի ղեկավար Ժիրայր Հակոբյանի, Փոքր Մանթաշի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի օգոստոսի 8-ին և ավարտվել է 2013 թվականի օգոստոսի 21-ին:

Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը՝

Փոքր Մանթաշի համայնքի ղեկավարը համայնքում կատարված նախորդ վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2010 թվականի օգոստոսի 11-ի տեղեկանքը չնայած ներկայացրել է համայնքի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 11 արտահերթ նիստի քննարկմանը, սակայն այն սահմանված կարգով չի արձանագրվել ավագանու նիստերի արձանագրությունների գրանցամատյանում: Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակվել և գործողության մեջ են դրվել միջոցառումների ժամանակացույց՝ համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների

իրականացման ուղղությամբ արձանագրված թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ և այդ մասին ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացվել է համապատասխան տեղեկատվություն:

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի նորընտիր ավագանին 2012 թվականի դեկտեմբերի 18-ի նիստում ընդունել է ավագանու կարոնակարգը (որոշման հերթական համարը նշված չէ):

2) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի զարգացման 2009-2012 թթ ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու 2009 թվականի հունվարի 16-ի թիվ 2 նիստում:

Համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված թվով 5 ծրագրային աշխատանքներից կատարվել են խմելու ջրի ներքին ցանցի մասնակի վերանորոգման, ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգման և նախադպրոցական հիմնարկի մասնակի վերանորոգման աշխատանքները: Չեն կատարվել մշակույթի տան կառուցման և բնակավայրի գազաֆիկացման ավարտման աշխատանքները:

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը կազմված է որոշակի թերություններով: Նրանում լիարժեք տեղեկություններ չեն ներկայացվել համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի մասին, չեն ներկայացվել համայնքը բնութագրող վիճակագրական լիարժեք տվյալներ: Չեն տրվել քառամյա ժամկետում համայնքի բյուջեի կատարման, ինչպես նաև հողի հարկի, գույքահարկի և հողի վարձակալական վճարների ապառքների հավաքագրման կանխատեսումներ, փաստաթղթում բացակայում են նախատեսված աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեից կատարվելիք ներդրումների ապահովման հիմնավորումները: Փաստաթղթում նախատեսված ծրագրային աշխատանքներն ունեն ընդհանուր բնույթ: Նրանցում չեն նշվել առաջադրված հիմնախնդիրների նկարագրությունները, ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, աշխատանքների ծավալները, ֆինանսավորման աղբյուրները, կատարման ժամկետները, ինչպես նաև իրականացվելիք ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումները:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ավագանին չի անդրադարձել համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված ծրագրային աշխատանքների կատարման ընթացքին:

3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները (ավագանու որոշումներ՝ 17.01.2011թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 1), 06.12.2011թ., (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 7) և 09.01.2013թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 1):

Համայնքի ավագանին համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները հաստատելուց առաջ համապատասխան որոշումներ կայացնելու փոխարեն համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու, համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ որոշումներն ընդունել համայնքի բյուջեները հաստատելուց հետո:

Համայնքի 2011 և 2012 թվականի բյուջեները հաստատելու վերաբերյալ ավագանու 17.01.2011թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 1), 06.12.2011թ., (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 7) որոշումների մեջ հղումներ են կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետին, որը սահմանում է ավագանու կանոնակարգը ընդունելու մասին ավագանու իրավասությունը, իսկ համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու վերաբերյալ ավագանու 09.01.2013թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 1) որոշման մեջ բացակայում են հղումները «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին: Բացի այդ, հարցի վերաբերյալ ավագանու որոշումները չեն ձևակերպվել հավելվածի տեսքով (հիմք՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մաս):

Համայնքի ավագանին 09.01.2013թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 1) որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը՝ համայնքի 2012 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ: Որոշման մեջ համապատասխան հղումներ չեն կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին:

Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին թվով 7 որոշումներ է կայացրել համայնքի 2010, 2011 և 2012 թվականների բյուջեներում փոփոխություններ կատարելու համայնքի ղեկավարի առաջարկությունների վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 27.10.2010թ., թիվ 26-Ն, արձ. թիվ 6, 11.03.2011թ., (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 2), 14.02.2012թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 2), 02.05.2012 թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 4), 15.06.2012 թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 5), 30.08.2012 թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 6), 25.10.2012 թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 8)):

Համայնքի բյուջեում կատարված փոփոխություններին վերաբերվող համայնքի ավագանու որոշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են՝ բառեր կամ թվեր այլ բառերով կամ թվերով փոփոխարինելու միջոցով, բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով, բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով, բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով: Որոշումներում բացակայում են հղումները՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին:

Համայնքի բյուջեները, բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, բյուջեներում կատարված փոփոխությունները հաստատելուն վերաբերվող ավագանու որոշումների հերթական համարներից հետո (բացառությամբ ավագանու 27.10.2010թ, թիվ 26-Ն որոշման) «Ն» (նորմատիվ) տառի նշումը բացակայում է (հիմք՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մաս):

4) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկման, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն չի իրականացրել և այդ հարցերի վերաբերյալ որոշումներ չի կայացրել:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքը օրենքով սահմանված կարգով վարկեր չի ստացել:

5) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի ավագանին թվով 13 որոշումներ է կայացրել կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշման վերաբերյալ, համաձայն որոնց համայնքի թվով 220 կարիքավոր անձանց տրամադրվել է ընդհանուր գումարով՝ 5600.0 հազ. դրամի միանվագ դրամական օգնություն (ավագանու որոշումներ՝ 27.10.2010թ. թիվ 27, արձ. թիվ 6, 11.03.2011թ. արձ. թիվ 2, 06.07.2011թ. արձ. թիվ 4, 18.10.2011թ. արձ. թիվ 5, 14.02.2012թ. արձ. թիվ 2, 29.03.2012 թ. արձ. թիվ 3, 27.03.2013թ. արձ. թիվ 3, 09.04.2013 թ. արձ. թիվ 4 (հերթական համարները նշված չեն) և այլն):

Իսկ համայնքի ավագանու 27.03.2013 թ. թիվ 3 և 09.04.2013թ. թիվ 4 նիստերում 2-ական որոշումներ են ընդունվել համայնքի կարիքավոր ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու հարցերի վերաբերյալ, մինչդեռ դրանք կարելի էր ընդունել մեկ իրավական ակտով:

6) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ավագանին մեկ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ (ավագանու որոշում՝ 09.04.2013թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 4), համաձայն որի «Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի զբաղեցրած, ինչպես նաև դրա սպասարկման և օգտագործման համար համայնքի սեփականություն հանդիսացող 2.5 հա հողամասը նվիրաբերվել է Հայաստանի Հանրապետությանը: Որոշման մեջ համապատասխան հղումներ չեն կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի և ՀՀ հողային օրենսգրքի համապատասխան հոդվածի դրույթներին:

Իսկ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

7) Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել և այդ հարցի վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

8) Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7¹-րդ կետի համաձայն համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկման դեպքեր չեն արձանագրվել:

9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականներին համայնքի ղեկավարի վարձատրության չափի վերաբերյալ: Որոշումներով սահմանված համայնքի ղեկավարի աշխատավարձի չափերը համապատասխանում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Ազգային Ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ սահմանված տոկոսաչափին, սակայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները:

10) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, դրանց վերակազմակերպման կամ լուծարման մասին համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել՝ դրանց անհրաժեշտությունը չլինելու պատճառով:

11) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի առաջարկությամբ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին համաձայնություն տալու վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

12) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը հանված է (08.12.11 ՀՕ-342-Ն):

13) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 17.01.2011թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 1), 18.01.2012թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 1) և 09.01.2013թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 1)): Որոշումներում համապատասխան հղումներ չեն կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները: Բացի այդ, հավելվածի տեսքով հաստատված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ավագանու նիստերի արձանագրությունների գրանցամատյանում արձանագրված չեն:

Ստուգված ժամանակաշրջանում տեղական հարկերի տեսակների և դրույքաչափերի սահմանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

14) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափեր սահմանելու վերաբերյալ ավագանին որոշումներ չի կայացրել:

15) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն համայնքի ավագանին թվով 1 որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ (ստուգման արդյունքները նեկայացված են 6-րդ կետում):

16) Ստուգված ժամանակաշրջանում համայնքային նշանակության փողոցների, հրապարակների, գրոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

17) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանին որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 15.12.2010թ. թիվ 38-Ն, արձ. թիվ 7, 06.12.2011թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 7), 09.01.2013թ. (հերթական համարը նշված չէ, արձ. թիվ 1): Սակայն նշված որոշումները ամբողջական տեսքով չեն արձանագրվել ավագանու նիստերի արձանագրությունների գրանցամատյանում:

Ընդունված որոշումներում համապատասխան հղումներ չեն կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի դրույթներին և ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները: Բացի այդ, որոշումներում լիարժեք հղումներ չեն կատարվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փոքր Մանթաշի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 55-Ա հրամանին:

Համայնքի ավագանու նույն որոշումներով հաստատվել են համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և հաստիքացուցակը:

Ստուգված ժամանակաշրջանում գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների թվաքանակի և (կամ) հաստիքացուցակի փոփոխություններ և (կամ) լրացումներ չեն կատարվել:

18) Համայնքի ավագանին չի հաստատել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

19) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ավագանին հաստատել է համայնքի սեփականության 2010 թվականի գույքագրման փաստաթղթերը (ավագանու որոշում՝ 15.12.2010թ. թիվ 37-Ն, արձ. թիվ 7): Որոշման մեջ հղում չի կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետին, իսկ հավելվածի տեսքով հաստատված համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված կարգով չի արձանագրվել ավագանու նիստերի արձանագրությունների գրանցամատյանում:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջը և համայնքի սեփականության 2011 և 2012 թվականների գույքագրման փաստաթղթերը չի ներկայացրել ավագանու հաստատմանը:

Համայնքի ղեկավարը չի ապահովել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջը և սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո մեկշաբաթյա ժամկետում գույքագրման փաստաթղթերում չի

սահմանված՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքային սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումների կազմակերպման և վերահսկման իր պարտադիր լիազորությունները:

2010թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 38961.8 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 38620.2 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 99.1 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 341.6 հազար դրամ:

2011թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 41572.5 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 41214.1 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 99.1 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 358.4 հազար դրամ:

2012թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 42380.5 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 41455.5 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 97.8 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 925.0 հազար դրամ:

2013 թվականի 7 ամիսներին համայնքի բյուջեով նախատեսված 27490.3 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 26152.6 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 95.1 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 1337.7 հազար դրամ:

4) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.2 մասի պահանջի, համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկեր, տեղական տուրքեր և վճարներ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվել:

5) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարը չի ներկայացրել ավագանու հաստատմանը:

6) Համայնքի ղեկավարը ստուգված ժամանակաշրջանում ոչ լրիվությամբ է ապահովել համայնքի բյուջեի եկամուտների ամբողջական կատարումը:

Համայնքի վարչական բյուջե հավաքագրված գումարները հիմնականում ծախսվել են աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների, էլեկտրաէներգիայի, կոմունալ վճարումների, գործուղումների, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու, տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպման, տրանսպորտային ծառայությունների և այլ ծախսերի կատարման համար, իսկ ֆոնդային բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են լրիվությամբ:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

1. Փոքր Մանթաշի համայնքի ղեկավարի կողմից համայնքի գլխավոր հատակագծի ու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմման գործառույթներ չեն իրականացվել,

2. համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարման գործընթաց չի իրականացվել, համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը ամփոփված է Փոքր Մանթաշի գյուղապետարանի կանոնադրության մեջ,

3. համայնքի ղեկավարի կողմից համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկման դեպքեր չեն արձանագրվել, կառուցապատողին տրվել է մեկ ճարտարապետահատակագծային առաջադրանք /ՃՀԱ՝ 06.04.2012թ. N:01/ և համաձայնեցվել է մեկ ճարտարապետաշինարարական նախագիծ:

Գործընթացներն իրականացվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան,

4. համայնքի ղեկավարի կողմից տրամադրվել է 1 շինարարության թույլտվություն՝ Փոքր Մանթաշի համայնքի մանկապարտեզի մասնակի վերանորոգման համար /19.07.2012թ. N:01/:

Նշված գործընթացն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան,

5. ձևակերպվել է մեկ ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ /24.01.2012թ. N:1/.

6. համայնքում ինքնակամ շինարարության դեպքեր չեն արձանագրվել և դրանց կանխմանն ու կասեցմանն ուղղված, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել,

7. համայնքի ղեկավարի կողմից շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների կատարման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել,

8. համայնքի ղեկավարի կողմից կատարվել է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառում, սակայն օրենքով սահմանված կարգով միայն 2010 թվականի գույքագրման փաստաթղթերն են ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը,

9. համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն չի տրամադրվել,

10. համայնքային սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, որոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման կազմակերպման և կառավարման վերաբերյալ գործառույթներ չեն իրականացվել,

11. համայնքը չունի բազմաբնակարան բնակելի շենքեր: Ուստի դրանց կառավարմանն ուղղված համապատասխան գործառույթներ չեն իրականացվել:

3. Հողօգտագործման բնագավառ

1. Փոքր Մանթաշի գյուղական համայնքը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով կառավարության սահմանված կարգով կազմված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա չունի:

2. Փոքր Մանթաշի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 452,13 հա, որից վարելահող՝ 12,18 հա, արոտ՝ 414,96 հա և այլ հողեր՝ 24,99 հա: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 2652,09 հա, որից արոտ՝ 1606,6 հա և այլ հողեր՝ 1037,4 հա:

Գյուղապետարանում առկա է գյուղատնտեսական նշանակության հողերի համար օրենքով սահմանված կարգով կնքված և պետական գրանցման ենթարկված 18 վարձակալության պայմանագիր, որից համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար 12 պայմանագրեր 9,0689 հա վարելահողերի համար՝ 140,830հազ դրամ տարեկան վարձավճարով, իսկ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար 6 պայմանագրի 120 հա արոտների համար՝ 205,0հազ. դրամ տարեկան վարձավճարով:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3,11 հա վարելահողեր և 414,96 հա արոտներ օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրված չեն:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ 01.08.2010թ.-31.12.2010թ. ժամանակահատվածում բյուջեով նախատեսված 319,7հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 207,04 հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, համայնքի հաշվարկային հաշվին կատարվել է նաև 90 հազ. դրամ փոխանցում: Արդյունքում համայնքի բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 22,66 հազ.դրամ:

2011թ. բյուջեով նախատեսված 860հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 200,7հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, համայնքի հաշվարկային հաշվին կատարվել է նաև 419,7հազ. դրամ փոխանցում: Արդյունքում համայնքի բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 239,6հազ.դրամ:

2012թ. բյուջեով նախատեսված 976,1հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 181,4հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, համայնքի հաշվարկային հաշվին կատարվել է նաև 360,0հազ.դրամ փոխանցում: Արդյունքում համայնքի բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 434,0հազ դրամ:

01.01.2013-01.08.2013թ. դրությամբ բյուջեով նախատեսված 668,44հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 100,4 հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, համայնքի հաշվարկային հաշվին կատարվել է նաև 180,0հազ. դրամ փոխանցում: Արդյունքում համայնքի բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 388,04հազ դրամ:

01.08.2010-01.08.2013թ.թ. ժամանակահատվածում համայնքային և պետական սեփականություն համարվող հողամասերի սահմանված կարգով օտարում չի իրականացվել:

3. Փոքր Մանթաշ համայնքի գյուղացիական տնտեսություններում հաշվառված 1089 գլուխ խոշոր եղջերավոր անասունների առկայության պայմաններում 414,96հա համայնքային սեփականության արոտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել արոտների օգտագործումը օրենքով սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ:

4. 01.08.2010թ.-01.08.2013թ. ժամանակահատվածում Փոքր Մանթաշի համայնքի ղեկավարի կողմից ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

5. Օրենքով սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման գործընթացը:
6. Պատշաճ վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 5 գեոդեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության նկատմամբ:

4. Տրանսպորտի բնագավառ

- 1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման գործառույթներ համայնքի ղեկավարի կողմից չեն իրականացվել:
- 2) Համայնքում հասարակական տրանսպորտի, ինչպես նաև համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների ու կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված, համայնքի ղեկավարի կողմից այդ ոլորտի գործունեության կազմակերպման և կառավարման ուղղությամբ գործառույթներ չեն իրականացվել:
- 3) Իրավասու մարմինների կողմից համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման, հանման հաստատման և թույլատրման առաջարկություններ չեն ստացվել և այդ ոլորտում համայնքի ղեկավարի կողմից գործառույթներ չեն իրականացվել:
- 4) Համայնքի ղեկավարի կողմից ՀՀ կառավարության սահմանած կարգով և ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհների վերաբերյալ լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա չի կազմվել և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

7. Այլ բնագավառներ

- 1) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել և անցկացվել են համայնքի ավագանու 26 նիստեր, որոնցում քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող 48 հարցեր, ընդունվել են նորմատիվ և անհատական բնույթի որոշումներ: Այդ թվում՝ 2010 թվականի 5 ամսում անցկացվել է 2 նիստ, ընդունվել է 5 որոշում, 2011 թվականին՝ 7 նիստ, 14 որոշում, 2012 թվականին՝ 9 նիստ, 14 որոշում, իսկ 2013 թվականի 7 ամսում՝ 8 նիստ, 15 որոշում:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվել են համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների 1 գրանցամատյան, որը սահմանված կարգով համարակալված, թելակարված և կնքված է համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը և 14.04.2011թ.-06.07.2011թ., 06.07.2011թ.-18.10.2011թ., 15.06.2012թ.-

30.08.2012թ. ընկած ժամանակահատվածներում չի ապահովվել ոչ պակաս քան երկու ամիսը մեկ անգամ համայնքի ավագանու նիստերի անցկացումը:

Չի ապահովվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը և ավագանու նիստերի օրակարգերը չեն հաստատվել ավագանու որոշմամբ: Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների գրանցամատյանում ավագանու կողմից ընդունված իրավական ակտերի հերթական համարակալում չի կատարվել: Բացի այդ, ավագանու առանձին նիստերի օրակարգերում ընդգրկվել են հարցեր, որոնք առանց պատճառը նշվելու չեն քննարկվել (ավագանու նիստեր՝ 15.12.2010թ. թիվ 7, 17.01.2011թ. թիվ 1 և այլն):

Առանձին դեպքերում ընդունված իրավական ակտերի քնույթի մասին՝ «Ն» (նորմատիվ), «Ա» (անհատական) տառերի նշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներին (ավագանու որոշումներ՝ 15.12.2010թ. թիվ 37-Ն, 38-Ն, 18.01.2012թ. թիվ 1-Ն և այլն):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի նորընտիր ավագանին ընդունել է ավագանու կանոնակարգը (ավագանու որոշում՝ 18.12.2012թ թիվ 1, արձ. թիվ 9):

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջը և համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստը գումարել է օրենքով սահմանված ժամկետից ուշ (նորընտիր ավագանու լիազորությունների ստանձնման ժամկետը՝ 11.11.2012թ, նորընտիր ավագանու առաջին նիստի անցկացման օրը՝ 18.12.2012թ.): Բացի այդ, չի ապահովվել նաև ավագանու կանոնակարգի 3-րդ կետով սահմանված համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստի անցկացման ընթացակարգը, համաձայն որի՝ ավագանու նորընտիր անդամները հանդիսավոր պայմաններում անհատական կարգով տալիս են երդում և ստորագրում են երդման տեքստը:

Համայնքի ղեկավարը թերություններով է կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով սահմանված համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունները՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան որոշումների ընդունման, արձանագրությունների կազմման և կարգադրությունների արձակման ուղղությամբ:

Համայնքի ղեկավարի կողմից ոչ միշտ է ապահովվել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգը և համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ բնույթի առանձին իրավական ակտեր պետական իրավական փորձաքննության համար չեն ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն (ավագանու կանոնակարգի ընդունում, համայնքի զարգացման քառամյա ծրագրի հաստատում, համայնքի բյուջեի և նրանում կատարված փոփոխությունների հաստատում, բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների հաստատում, օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանում և այլն):

Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու նիստերի ոչ բոլոր օրակարգերի նախագծերն են ձևավորվել նիստից առնվազն տասը օր առաջ: Նիստերի օրակարգերի նախագծերը, դրանցում ընդգրկված հարցերի որոշումների նախագծերը և համապատասխան փաստաթղթերը ոչ միշտ են տրամադրվել համայնքի ավագանու անդամներին նիստն

սկսվելուց առնվազն յոթ օր առաջ, իսկ արտահերթ նիստեր հրավիրելու դեպքում նիստից մեկ օր առաջ (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածներ):

Աշխատակազմում սահմանված կարգով հաշվառում չի տարվել ավագանու նիստերին ավագանու անդամների մասնակցության վերաբերյալ: Համայնքի նորընտիր ավագանու անդամներ՝ Վահան Մաթևոսյանը և Միեր Մկրտչյանը իրենց լիազորությունները ստանձնելուց հետո (12.11.2012թ.) անցկացված ավագանու բոլոր 8 նիստերից բացակայել են: Սակայն նշված փաստը ավագանու կողմից չի քննարկվել և նրանց ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում չի ընդունվել (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ, 2-րդ մաս):

Համայնքի ավագանու որոշումներին բնութագրական են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման տարբեր խախտումներ: Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի առանձին որոշումներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի համաձայն չեն պարունակում հղումներ, թե դրանք ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի մասի համաձայն կամ ի կատարումն են ընդունվել, իսկ առանձին որոշումներում կատարված հղումները սխալ են, թերի կամ ոչ հստակ (ավագանու որոշումներ՝ 17.01.2011թ, արձ. թիվ 8, 06.07.2011թ, արձ. թիվ 4, 18.01.2012թ, արձ. թիվ 1, 09.01.2012թ, արձ. թիվ 9 (որոշումների հերթական համարները նշված չեն):

Բացի այդ, համայնքի ավագանու նիստերում քննարկվել են այնպիսի հարցեր, որոնք «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն համայնքի ավագանու իրավասությանը չեն վերաբերվում: Ավագանու 29.03.2012թ. թիվ 3 նիստում որոշում է կայացվել համայնքի 2012 թվականի բյուջեի կատարման եռամսյա համամասնությունները հաստատելու վերաբերյալ, որի սահմանումը համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի վերապահված է համայնքի ղեկավարին:

2) Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1¹ կետի պահանջը և իր կողմից ընդունված ոչ բոլոր անհատական ակտերն է սահմանված ժամկետում ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում:

3) Համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը հաստատվել է համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 13-ի թիվ 3 որոշմամբ:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջը և գյուղապետարանի աշխատակազմի նոր կանոնադրությունը, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների նոր կանոնադրությունները չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը:

4) Գյուղապետարանում առանձնացված ստորաբաժանումների բացակայությամբ պայմանավորված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքները հաստատելու վերաբերյալ որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

- 5) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2011թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, իսկ 2012 և 2013 թվականների թվաքանակը և հաստիքացուցակը հաստատելու վերաբերյալ որոշումների նախագծերը ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը: Հարցի վերաբերյալ ստուգման մանրամասները ներկայացված են սույն ակտի 7-րդ էջի 17-րդ կետում:
- 6) Համայնքի ղեկավարի կողմից համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 7) Համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված համայնքի ղեկավարի կողմից դրանց խորհրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 8) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակում ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից համայնքի ղեկավարի տեղակալի և աշխատակազմի քարտուղարի պաշտոններում նշանակումներ չեն կատարվել:
- 9) Համայնքի ղեկավարի կողմից համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների ղեկավարների պաշտոններում նշանակում կատարելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություն չի ներկայացվել:
- 10) Համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 11) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել և միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մոծելու մասին որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 12) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 9-ի թիվ 4 նիստում առաջարկություն է ներկայացվել «Փոքր Սանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի զբաղեցրած, ինչպես նաև դրա սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ համայնքի սեփականություն հանդիսացող 2.5 հա հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու վերաբերյալ:
- 13) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություն չի ներկայացվել:
- 14) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից համայնքի փողոցների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների անվանման կամ վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություններ չեն ներկայացվել:

- 15) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից անշարժ գույքի հասցեավորման վերաբերյալ ընդունվել են թվով 8 որոշումներ:
- 16) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 44 որոշում և արձակվել 21 կարգադրություն: Նշված իրավական ակտերի արձնագրությունների 2 գրանցամատյանները սահմանված կարգով թելակարված և կնքված չեն համայնքի ղեկավարի կողմից:
Համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների մեծ մասը <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով սահմանված կարգով չունեն վերնագրեր (համայնքի ղեկավարի որոշումներ՝ 20.08.2010թ. թիվ 8, 10.01.2011թ. թիվ 1, 13.04.2011թ. թիվ 5, 23.05.2011թ. թիվ 8, 07.01.2012թ. թիվ 5, 07.03.2013թ. թիվ 7 և այլն):
- 17) Որպես պետության պատվիրակած լիազորություն համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել և ղեկավարվել է համայնքում անասնաբուժական ծառայությունը: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքում անասունների հիվանդությունների բռնկման դեպքեր չեն արձանագրվել:
- 18) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների վարման աշխատանքներ չեն իրականացվել:
- 19) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:
Սահմանված կարգով համայնքում ստեղծվել և գործում են քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարիանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:
Համայնքի ղեկավարի 23.05.2011թ. թիվ 8 որոշմամբ համայնքում անցկացվել են քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժություններ՝ <<Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ձնաքթի ժամանակ>> թեմայով:
- 20) Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է համայնքային գիրք (ծխամատյան) և կազմակերպվում է համայնքի բնակիչների հաշվառումը:
- 21) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում ներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել:
- 22) Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից կատարվում են քաղաքացիների ընդունելություններ, օրենքով սահմանված կարգով քննության են առնվում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:
- 23) Համայնքի ավագանու 14.04.2011թ. որոշմամբ (որոշման հերթական համարը նշված չէ արձ. թիվ 3), համայնքում ստեղծվել է համայնքի ղեկավարին կից՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, սակայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 14-ի թիվ 164-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների

կանոնադրության 3-րդ կետ համաձայն հանձնաժողովի անհատական կազմից հանձնաժողովի քարտուղար չի սահմանվել: Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից խնամակալություն կամ հոգաբարձություն չի սահմանվել:

24) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի ղեկավարի կողմից տրվել են երեխայի ծննդի պետական գրանցման վերաբերյալ գրավոր հայտարարություններ:

25) Գյուղապետարանում օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվել են տարածքային զինվորական կոմիսարիատ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքի զինապարտ քաղաքացիների կողմից իրենց պարտականությունները խախտելու դեպքեր չեն արձանագրվել:

ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն գյուղապետարանի աշխատակազմի նոր կանոնադրությունը չի ներկայացրել համայնքի ավագնու հաստատմանը:
2. ՀՀ կառավարության սահմանված կարգով աշխատակազմում չեն վարվում իրավական ակտերի հաշվառման մատյաններ:
3. Իրավական ակտերի հաշվառման մատյանների բացակայությամբ պայմանավորված ուսումնասիրության ենթարկված համայնքի ավագանու թվով 48, համայնքի ղեկավարի թվով 44 որոշումների, արձակված թվով 21 կարգադրությունների և աշխատակազմի քարտուղարի թվով 34 հրամանների համադրում չի կատարվել:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների խախտումներով են ձևակերպվել գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի հրամանները: Արձակված հրամանները չունեն վերնագրեր, աշխատակազմի աշխատակիցների աշխատանքային հարաբերություններին վերաբերվող առանձին հրամաններում չեն նշվել (կամ ճիշտ չեն նշվել) պաշտոնների անվանումները (26.05.2011թ. թիվ 2, 01.10.2012թ. թիվ 4, 01.10.2012թ. թիվ 5, 01.07.2011թ. թիվ 10, թիվ 11, 2011թ. (ընդունման օրը նշված չէ) թիվ 14, 01.09.2011թ. թիվ 15), առանձին հրամաններում նշված չեն արձակման օրը (2011թ. թիվ 13, թիվ 14, 2012թ. թիվ 6):

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի 30.10.2010թ. թիվ 17 և 01.12.2012թ. թիվ 9 հրամաններով ժամանակավոր պաշտոնակատարներ են նշանակվել համայնքային ծառայության առաջին և երկրորդ կարգի մասնագետների պաշտոններում՝ չապահովելով ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգի 7-րդ կետի պահանջները, իսկ 01.07.2011թ. թիվ 9 հրամանով համայնքային ծառայության դասային աստիճան է շնորհվել

աշխատակազմի առաջատար մասնագետ Արամ Աղաջանյանյանին այն դեպքում, երբ վերջինս նշված պաշտոնում նշանակվել է 2009 թվականի օգոստոսի 18-ին:

4. Աշխատակազմում առանձնացված ստորաբաժանում (բաժին) չլինելու պատճառով, ստուգված ժամանակաշրջանում գյուղապետարանի կառուցվածքը հաստատելու վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
5. ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված Փոքր Մանթաշի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 6-ն են՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.2.3), առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1.1), առաջին կարգի 2 մասնագետ (ծածկագիր՝ 3.2.1, 3.2.2) և երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.3.1): Նշված 6 համայնքային ծառայության պաշտոններն օրենքով սահմանված կարգով զբաղեցված են: Համայնքի ավագանու համապատասխան որոշումներով 2010, 2011 և 2012 թվականների համար հաստատված գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համապատասխանում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված Փոքր Մանթաշի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում նշված անվանումներին: Համայնքային ծառայողների մասով 2010-2013 թվականների համար հաստատված պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
6. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի վերջին անձնագիրը հաստատվել է համայնքի ղեկավարի 2011 թվականի մայիսի 13-ի թիվ 9 որոշմամբ և ուժը կորցրած է ճանաչվել հարցի վերաբերյալ համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 13-ի թիվ 7 որոշումը, որը համայնքի ղեկավարի որոշումների արձանագրությունների գրքում բացակայում է: Ստուգված ժամանակաշրջանում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից պաշտոններ չեն հանվել և նոր պաշտոններ չեն ավելացվել: Համայնքի ղեկավարի կողմից հաստատված պաշտոնների վերջին անձնագրերի բովանդակությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:
7. Համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը կատարվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված «Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի» առանձին դրույթների թերություններով: Համայնքային ծառայողների առանձին անձնական գործերում բացակայում են համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը, պաշտոնի նշանակելու և դադարի աստիճան շնորհելու մասին իրավական ակտերը, համայնքային ծառայողների թափոր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և ատեստավորումների համապատասխան հանձնաժողովների եզրակացությունները, համայնքային ծառայության կիսամյակային հաշվետվություններն ու դրանց վերաբերյալ անմիջական ղեկավարի եզրակացությունները, համայնքային ծառայողի կողմից իր անձնական գործի բոլոր նյութերին և գործունեության գնահատականներին ծանոթացված

լինելու մասին վկայող փաստաթղթերը: Անձնական գործերում առկա փաստաթղթերի վերգրերը լրացված են թերի, իսկ գործերում առկա փաստաթղթերը չեն համարակալվել:

8. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական նոր կազմերը հաստատվել են համայնքի ղեկավարի 21.01.2013թ. թիվ 2 որոշմամբ, սակայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով սահմանված կարգով ուժը կորցրած չի ճանաչվել հարցի վերաբերյալ համայնքի ղեկավարի նախորդ որոշումները: Համայնքի ղեկավարը չի ապահովել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի 3-րդ կետով սահմանված կարգի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու 3 անդամներին ընդգրկել է առանց ավագանու համապատասխան որոշման:
9. ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարի 25.12.2012թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը:
10. ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից չի հաստատվել աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգ և չի ապահովվել դրա պատշաճ իրազեկումը աշխատակազմի բոլոր աշխատակիցներին:
11. Աշխատակազմում սահմանված կարգով չեն վարվում «Համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցույթներին դիմած քաղաքացիների տվյալների գրառման», «Համայնքային ծառայողների վերապատրաստման հաշվառման» և «Համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման» համարակալված մատյաններ:
12. Ուսումնասիրությամբ պարզվել է, որ մրցույթի արդյունքներով համայնքային ծառայության պաշտոնների նշանակված աշխատակազմի համայնքային ծառայողների կրթության, համապատասխան ստաժի և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:
13. Համայնքի ղեկավարի կողմից ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված գրանցամատյանային (Ձև NN 1, 2) տվյալները արժանահավատ են:
14. Ստուգված ժամանակաշրջանում աշխատակազմի համայնքային ծառայության 1-ին կարգի մասնագետի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 27.05.2011թ. անցկացված մրցույթի և աշխատակազմի քարտուղարի 25.03.2013թ. ատեստավորման փաստաթղթերի փաթեթներն ամբողջական են:
15. Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է գինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյան:

16. ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի կողմից 2011 թվականին Փոքր Մանթաշի համայնքում կատարվել են կադրային գործի վարման գործընթացների ուսումնասիրություններ: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ամբողջությամբ վերացվել են ուսումնասիրության արդյունքում արձանագրված թերություններն ու բացթողումները և այդ մասին ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացվել է համապատասխան տեղեկատվություն:

[Handwritten signatures and initials]
ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՄԱՐԻԱՄ ԳՅՈՂԱԿՅԱՆ
ԱՐՏԱԿԱՁԴ ԳԵԿՈՐԳՅԱՆ
ՀՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԶՈՐԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ
ԷՄԻԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԺԻՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ